493 Հիսուսն հարյավ ի մեռելոց,

1. Հիսուսն հարյավ ի մեռելոց,
Գնաց երկինք և խոստացավ
Ուղարկելու մեզ Սուրբ Հոգին՝
Սովորեցնող, մխիթարող:

Տե՛ր իմ մե՛ծ (2), Հիսո՛ւս,
Սուրբ Հոգով (2) լցրու,
Պիտ երգեմ (2) ես Քեզ,
Արժանի ես գոհության:

2. Սո՛ւրբ Հոգի Դու ճշմարտության,
Խրատում ես, սովորեցնում:
Աստված կտա Հոգին նրան,
Ով կընդունի Որդուն խաչված:

3. Սուրբ Հոգուն դու հնազանդվի՛ր
Ու Նրա հետ մտերմացի՛ր,
Լսի՛ր Նրա խրատը միշտ,
Երբ շշնջում է ականջիդ:

4. Հոգու ձայնը սիրով լսի՛ր,
Այս աշխարհը մի՛ ցանկացիր,
Մարմնիդ ցավը կմոռանաս,
Հոգուդ փրկություն կունենաս:

5. Սուրբ Հոգի՛, միշտ ինձ հետ եղիր,
Դու կտաս ինձ ճիշտ ուղղություն,
Օրհնյալ Հոգի, ինձ պատրաստի՛ր,
Որ միանամ իմ Տեր Փրկչին: